

Արձանագրություն թիվ 5

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ նոյեմբերի 22-ին

Օրակարգը՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 15 –ը, քվորում ունենք հետևաբար կարող ենք անցնել մեր աշխատանքին: Օրակարգին բոլորը ծանոթ եք. առաջարկություններ կամ փոփոխություններ օրակարգում ունե՞ք:

Ուսանող Հ.Սիմոնյան – Հնարավոր է արդյոք հիմա չհաստատենք ավարտական աշխատանքների վերնագրերը: Քանզի իմ աշխատանքի ընթացքում տեղի ունեցան երևույթներ , որի պատճառով հիմնապես փոխվում է ավարտական աշխատանքիս բնույթը և բնականաբար վերնագիրը:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան- Այստեղ խնդիր չկա քանզի քիմիան փորձարարական գիտություն է և հնարավոր է նախատեսված փորձերը չընթանան նորմալ հունով: Հետևաբար մինչև մարտ դուք կարող եք փոխել Ձեր ավարտականի վերնագիրը կախված աշխատանքի բնույթից: Այժմ կներկայացվի այնպես ինչպես արդեն ներկայացված է եղել, հետո կփոխենք:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց հաստատել ամբիոնների կողմից ներկայացված ավարտական աշխատանքների նախնական վերնագրերը:

Տ.Վ.Ղոչիկյան – ինչ փուլում են գտնվում մագիստրոսական թեզերը:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան, մեր ամբիոնում մագիստրոսական թեզ են կատերում 5 ուսանող՝ 3-ը քիմիայի բաժնից և 2-ը սննդի անվտանգություն բաժնից : Աշխատանքները գտնվում են ավարտման և զուգահեռ ձևակերպման փուլում:

Տ.Վ.Ղոչիկյան – Հարգելի գործընկերներ անցնենք օրակարգի երկրորդ կետին:

Պրոֆ. Ն.Ա.Դուրգարյան- սննդի անվտանգության 4-րդ կուրսի 1-ին կիսամյակում իրականացնում են հետազոտական բաղադրիչով աշխատանք ԲՄՄ առարկայից: Ուսանողների մի մասը արդեն փորձերի կատարման փուլում են, իսկ մյուսը՝ տվյալների հավաքագրման փուլում: Սակայն այս ընթացքում դասերին չեն ներկայացել երկու ուսանող Սահակյան Արսեն և Օհանյան Լուսինե: Ես այդ ուսանողների մասին արդեն իսկ գրել էի զեկուցագիր: Պետք է այդ հարցին ընթացք տալ:

Դեկանի տեղակալ Ա.Ս.Գալստյան – Մենք արդեն այդ ուսանողներին նկատողություն տվել ենք բացակայությունների հետ պայմանավորված: Հիմա արդեն պետք է միջնորդությամբ դիմենք ԵՊՀ ռեկտորատին, նման ուսանողներին նկատողություն տալու, հաջորդ փուլու ռեակտորի հրամանով այդ ուսանողները հեռաղջցվում են ԵՊՀ-ից:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան - Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին

Ա.Ի.Մարտիրոսյան – “Սննդի բաժնի” առաջին կուրսեցիների հետ աշխատանքները տանում ես: Բավականին խելացի աշխատող ուսանողներ են: Բացակայությունները քիչ են

Լ.Ս.Գաբրիելյան- Քիմիա բաժնի առաջին կուրսեցիները պարտաճանաչ խելացի ուսանողներ են: Սակայն խնդիր ունեն մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների հետ: Ուսանողներից մի քանիսը 10-12-րդ դասարաններում սովորել են հումանիտար հոսքում՝ հետևաբար այդ հոսքում մաթեմատիկա, ֆիզիկա, առարկաներ չեն դասավանդվել: Առաջին կուրսում ունենք մեկ ուսանող , ով անգլերենը տիրապետում է C-2 մակարդակով և որպես օտար լեզու ընտրել է գերմաները:

4. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: Այս հարցի հետ միանգամից քննարկենք նաև մագիստրոսական թեզերի ընթացքը:

Կոլոիդային և ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան-Մեր ամբիոնում ունենք 3 մագիստրոս; Մագիստրոսական թեզերը ղեկավարում են պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանը և դոցենտ Հ.Սարգսյանը: Աշխատանքների փորձարարական մասը ավարտված է: Աշխատանքները գտնվում են ձևակերպման փուլում:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան- Մեր ամբիոնում մագիստրոսական թեզեր անում են 5 ուսանող՝ 2-ը սննդի անվտանգության բաժնից և 3-ը՝ քիմիայի բաժնից: աշխատանքները ընթանում են նորմալ:

Անալիտիկ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Բ.Մարտիրյան Աշխատանքները ընթանում են նորմալ:

Գիտխորհրդում հաստատվեց (ամբիոններում արդեն իսկ քննարկված և հաստատված) ամբիոնների կողմից ներկայացված մագիստրոսական թեզերի վերնագրերը:

Հաստատվեց նաև ավարտական աշխատանքների նախնական վերնագրերը, որոնք կարող են փոփոխվել մինչև 2023թ-ի մարտ ամիսը՝ կախված աշխատանքի բնույթից և ընթացքից:

5. Ընթացիկ հարցեր

ա/ Վ.Գալստյանի կողմից գրություն է ստացվել 2023թ մարտի 30-31ին կայանալիք "ԱՐԻ ԵՊՀ» խորագրով էքսպո միջոցառման մասին: Նամակը ուղարկված է ամբիոնի վարիչներին: Պատրաստվեք և պլանավորեք էքսպո-ին մասնակցելու տարբերակները: Ս/Թ նոյեմբերի 25-ին, ժամը 10:00-ին տեղի կունենա հանդիպում ֆակուլտետների պատասխանատուների հետ:

բ/ Լսեցին. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնից «Տարբեր տիպի արտադրական ձեռնարկությունների առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար միացությունների և գործոնների հայտնաբերում և նույնականացում» թեմայով Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում

փորձարարական մշակումների նախագծերի հայտերի ընտրության մրցույթի ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար՝ ք.գ.դ. Լիաննա Մարգարյան: Գիտխորհուրդը երաշխավորեց թեմայի թեմատիկ ֆինանսավորումը: Եզրակացությունը կցվում է

զ/ Լսեցին. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի պրոֆեսոր, վաստակաշատ մանկավարժ Համարաբժում Գուրգենի Խաչատրյանին գիտության վաստակավոր գործչի կոչման շնորհման առաջարկության վերաբերյալ:

Ելույթ ունեցան- Նիստի նախագահ Տ.Վ.Ղոչիկյանը, պրոֆեսորներ՝ Ն.Ա.Դուրգարյանը, Ռ.Ս.Հարությունյանը, Շ.Ա.Մարգարյանը և այլոք: Նրանք նշեցին, որ Հ.Խաչատրյանը երկար տարիներ եղել է Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, այժմ նույն ամբիոնի պրոֆեսոր է, մասնակցել և ղեկավարել է մի շարք միջազգային դրամաշնորհներ, կազմակերպել է միջազգային կոնֆերանսներ: Հ.Գ.Խաչատրյանը ունի 214 գիտական աշխատություններ, որոնցից 159 հոդված(միջազգային և տեղական ամսագրերում), 44 թեզիս և 11 հեղինակային իրավունք: Նա գիտության և կրթության բնագավառում ունի երկար տարիների փորձառություն և վաստակ:

Որոշեցին – Քվեարկության միաձայն արդյունքով՝ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Հ.Գ.Խաչատրյանի թեկնածությունը “Գիտության վաստակավոր գործիչ” կառավարական պարգևին ներկայացնելու համար:

Գիտական խորհրդի նախագահ,

պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան